ՎԼԱԴԻՄԻՐ ԽՈՋԱԲԵԿՅԱՆ

(ծննդյան 60 ամյակի առթիվ)

Լրացավ սովետական անվանի տնտեսագետ, վաստակաշատ գիտնական Վլադիմիր Եզիշի Խոջաբեկյանի ծննդյան 60-ամյակը: Նա ծնվել է 1929 թ. Հայկական ՍՍՀ Բասարգեչարի (Վարդենիսի) շրջանի Ձախլու (Սովետակերտ) գյուղում: Վարդենիսի միջնակարգ դպրոցն ավարտելուց և ծննդավայրի դպրոցում երեք տարի պիոներական ջոկատավար աշխատելուց հետո նա ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը, որը գերազանցության դիպլոմով ավարտել է 1954 թ.: Այնուհետև որպես խմբագիր աշխատանքի է անցել Հայպետհրատում, իսկ 1960 թ. մինչև օրս աշխատում է ՀՍՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտում. եղել է ավագ գիտաշխատող, 1963-ից՝ գիտական քարտուղար, 1967-ից՝ բաժնի վարիչ, 1983-ից՝ գիտության գծով դիրեկտորի տեղակալ:

Գիտության նվիրյալի տքնաջան աշխատանքի արդյունքն են հրատարակած 135 աշխատությունները (մենագրություններ, գրքույկներ, գիտական հոդվածներ), 1963 թ. պաշտպանած թեկնածուական, իսկ 1975 թ.՝ դոկտորական դիսերտացիաները: Նրան շնորհվել է ավագ գիտաշխատողի, իսկ 1977-ին՝ պրոֆեսորի կոչում, 1982-ին՝ ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ: Արժեքավոր գիտական հետազոտություններ կատարելու և դրանց արդյունքները ժողովրդատնտեսական պլանավորման պրակտիկայում ներդնելու համար Վ. Խաչաբեկյանը երկու անգամ պարգևատրվել է ՀՍՍՀ ԳԱ «Գովեստագրով»:

Վ. Խոջաբեկյանն ավելի քան երեք տասնամյակ զբաղվում է սոցիալիստական էկոնոմիկայի արդիական պրոբլեմներով, մասնավորապես սոցիալիզմի քաղաքատնտեսության, ժողովրդագրության, հանրապետության բնակչության վերարտադրության և աշխատուժի օգտագործման արդյունավետ ուղիների գիտական կանխատեսման, սոցիալ-տնտեսական զարգացման և հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման հարցերով: Նրա աշխատություններում քննվող նյութերն ընդգրկում են ուսումնասիրվող պրոբլեմի տարբեր կողմերը, գտնվում են նրանց փոխկապակցության մեջ և տրամաբանական հաջորդականությամբ լրացնում են մեկը մյուսին:

Վ. Խոջաբեկյանի առաջին աշխատությունները (1950-ականի վերջերին) նվիրված են աշխատանքի արտադրողականության տեսական հարցերին, հերարտադրական ռեգերվների էության բացահայտմանը, դրանց դասակարգմանը, արդյունաբերական ձեռնարկությունների ռեգերվների հայտնաբերմանը և օգտագործմանը: Այդ աշխատություններում և գիտական հոդվածներում քաղաքատնտեսական տեսական ընդհանրացումները զուգակցվում են փաստացի նյութերի գիտական վերլուծության, դրանց ընդհանրացման և գործնական առաջարկությունների հետ: Լինելով այդ պրոբլեմին նվիրված անդրանիկ հրատարակությունները, դրանք արժանացել են գիտական մամուլի բարձր գնահատականին, իսկ գիտականորեն հիմնավորված հանձնարարականները ներդրվել են արտադրության մեջ:

Վ. Խոջաբեկյանին է պատկանում Հայաստանի բնակչության և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության պատմական զարգացման առանձնահատկությունների, երկարատև

հեռանկարում դրանց գիտական կանխատեսման առաջնությունը: Առաջինը նա է գիտականորեն հիմնավորել և մշակել հանրապետությունում աշխատուժի օգտագործման արդյունավետության բարձրացման ուղիները:

Վ. Խաչաբեկյանի գիտական ղեկավարությամբ և անմիջական մասնակցությամբ 1968 թ. Մոսկվայում ռուսերենով լույս է տեսել «Հայկական ՍՍՀ բնակչության ընդլայնված վերարտադրությունը և աշխատանքային ռեսուրսների օգտագործումը 1966—1985 թթ.», եռանասնամյա կոլեկտիվ աշխատությունը: Դրանում առաջին անգամ դիտականորեն կանխատեսվել են հանրապետության բնակչությունն ու աշխատանքային ռեսուրսները երկարատև հեռանկարում, հիմնավորվել են աշխատանքային ռեսուրսների կազմավորման, պատրաստման և բաշխման ուղիները, մշակվել տնտեսական շրջանի աշխատանքային ռեսուրսներն ըստ գրաղմունքի բնագավառների և ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի օպտիմալ բաշխման համապատասխան մեթոդիկա և նորմատիվներ, կազմվել աշխատանքային ռեսուրսների հաշվեկշիռներ՝ ճնգամյա կտրվածքով հեռանկարային տարիների համար: ՀՍՍՀ ԳԱ նախագահության 1969 թ. հունիսի 25-ի որոշմամբ այդ աշխատությունը գնահատվել է որպես «տեսական մեծ հետաքրքրություն և գրական կարևոր նշանակություն ունեցող» ուսումնասիրություն և ներկայացվել է ՀՍՍՀ պետպլանին ու օգտագործվել հանրապետության ժողովրդական տնտեսության հեռանկարային պլանավորման գրականությունում:

Վ. Խաչաբեկյանի մի այլ մենագրություն՝ «Հայկական ՍՍՀ բնակչությունը և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության արդի գրոբլեմները» (Երևան, 1976) նվիրված է ժողովրդագրության տեսական և գործնական հարցերին, աշխատանքային ռեսուրսների կազմավորման և բաշխման ուղիների բացահայտմանը (մինչև 2000 թ.), դրանց օգտագործման արդյունավետության բարձրացմանը, երկարատև հեռանկարում հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման, ժողովրդական տնտեսության ճյուղային և ներճյուղային կառուցվածքի կատարելագործման խնդիրներին, ժողովրդական տնտեսության կողմից ներկայացվող պահանջների համեմատ տնտեսական շրջանի հանրային արտադրության և չհանրայնացված աշխատանքի ոլորտների զարգացման սահմանների որոշմանը:

Վերոհիշյալ մենագրությունում և որոշ հոդվածներում առաջ քաշված մի շարք գիտական հարցադրումներ կարևոր դեր են խաղացել հանրապետության ժողովրդական տնտեսության հեռանկարային պլանավորման գիտական մակարդակի բարձրացման գործում: Հեռանկարում բնակչության ու աշխատանքային ռեսուրսների անի օրինաչափությունների, հասարակական արտադրության զարգացման հնարավորությունների բացահայտման հիման վրա կատարված գիտական եզրահանգումները և առաջարկությունները պետական պլանային մարմիններին հուշել են ժողովրդական տնտեսության, մասնավորապես արդյունաբերության զարգացման ընթացքը, կողմնորոշել առավել աշխատատար և բարձր որակավորում պահանջող, փոքր նյութատար, փոքր շրատար և փոքր էներգատար ճյուղերի, փոքր քաղաքների ու գյուղական շրջանների առավել արագ զարգացման ուղղությամբ:

«Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը 1828—1978 թթ.» (Երևան, 1979) մենագրության մեջ Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելու պատմական նշանակության բացահայտման ընդհանուր ֆոնի վրա պատմատնտեսագիտական գրականության մեջ առաջին անգամ քննվում են Հայաստանի բնակչության վերարտադրության առանձնահատկությունները, զբաղվածության բնույթի փոփոխությունները, նրա սոցիալ-տնտեսական զարգացման պատմական ընթացքի 150-ամյա պատկերը, տրվում Անդրկովկասում ճյուղերի տարաբնակեցման և տեղաշարժերի ընթացքը, Սովետական Հայաստանում բնակչության համաձավքը, ազգային գերբնակչության և գործազրկության վերացումը, զբաղվածության էվոլյուցիան, աշխատուժի օգտագործման արդյունավետության բարձրացման հարցերը: Առանձնահատուկ ուշադրություն է նվիրվում հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման, արտադրողական ուժերի տեղաբաշխման, աշխատանքի ու արտադրության կազմակերպման արդի խնդիրներին: Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել արխիվային և վիճակագրական հարուստ նյութեր, որոնց վերլուծության հիման վրա կատարված ընդհանրացումները գիտական մեծ արժեք ունեն:

ՀՍՍՀ ԳԱ և ԳԴՀ ԳԱ միջև կնքված երկկողմանի համաձայնագրի համաձայն 1976—1980 թթ. Վ. Խաչաբեկյանը բեղմնավոր գիտահետազոտական աշխատանք է ծավալել, որն արժանացել է երկու ակադեմիաների բարձր գնահատականին: Համատեղ ավարտված աշխատանքը հրատարակվել է գերմաներեն «Հայկական ՍՍՀ բնակչությունը և աշխատանքային ռեսուրս-

ները» (Բեռլին, 1983) և ռուսերեն («Դեմոգրաֆիական խնդիրները և աշխատանքային ռեսուրսների վերարտադրությունը», Երևան, 1983) լեզուներով:

Ավելորդ չէր լինի հիշեցնել, որ Հնդկաստանում 1988 թ. անգլերեն լույս տեսած հիմնարար ժողովածուում, նվիրված ռեգիոնալ պրոբլեմներին, զետեղվել է նաև Վ. Խոշաբեկյանի ծավալուն հոդվածը: Այն իբրև զեկուցում տարիներ առաջ կարդացվել էր սովետա-հնդկական գիտաժողովում:

Այս հրապարակումներում առաջ են քաշվում ՍՍՀՄ-ում ռեգիոնալ պլանավորման խնդիրները համապետական պլանավորման հետ հստակորեն զուգակցելու կարևորությունը, գիտականորեն հիմնավորվում երկրի աշխատանքային ռեսուրսներով ապահովված ռեգիոններում նոր աշխատատեղեր ստեղծելիս աշխատուժի ինտենսիվ տիպի ընդլայնված վերարտադրության սկզբունքները խստորեն կիրառելու անհրաժեշտությունը:

Վ. Խոշաբեկյանը համակողմանիորեն ուսումնասիրում է նաև ՍՍՀՄ ժողովրդագրական քաղաքականության արդի պրոբլեմները: Այդ քաղաքականությունը նա դեռևս 1960-ական թվականների հրապարակումներում դիտում էր որպես երկրում կիրառվող սոցիալ-տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մաս:

Ժողովրդագրական քաղաքականության, հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղությունների, աշխատանքային ռեսուրսների կազմավորման, բաշխման և օգտագործման վերաբերյալ բազմաթիվ նոր հարցադրումներ, մտահղացումներ, առաջարկություններ և լուծումներ կան ոչ միայն նրա ավելի քան մեկ տասնյակի հասնող մենագրություններում, այլև գիտական ամսագրերում, կենտրոնական և տեղական մամուլում լույս ընծայված հոդվածներում: Վ. Խոշաբեկյանի մի շարք առաջարկություններ իրացվել են:

Բնակչության վերարտադրության ռեժիմը պայմանավորող սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական զարգացման գործոնները գնահատելու, ապագայում դրանց դրսևորման ուղղությունները, միտումներն ու օրինաչափությունները բացահայտելու հիման վրա Վ. Խոշաբեկյանի գիտական ղեկավարությամբ և նրա մշակած մեթոդով մի շարք հատկանիշներով կանխատեսվել է Հայկական ՍՍՀ բնակչությունը 1979—2015 թվականներին: Հեռանկարային յուրաքանչյուր տարվա համար ԷՀՄ-ով, չորս հնարավոր տարբերակներով, կանխատեսվել է հանրապետության քաղաքների, շրջանների, գյուղական վայրերի բնակչությունը՝ ըստ սեռի, տարիքի. աշխատունակության, աշխատանքային տարիք մտած գործելու, թոշակառու տարիք թևակոխելու և բազմաթիվ այլ հատկանիշներով: Դրանք խմբավորվել են ըստ վարչական ու տնտեսական շրջանների, առանձին քաղաքների ու գյուղական վայրերի և ընդհանուր հանրապետության կտրվածքով: Առաջին անգամ բնակչությունը կանխատեսելիս կոնկրետ գումարելիներից ստացվում է ընդհանուր հանրապետականը՝ իր վեց տնտեսական շրջաններով՝ վերը հիշատակվող բոլոր հատկանիշներով: Նման մասշտաբի աշխատանք առաջին անգամ է կատարվում: ՀՍՍՀ ԳԱ նախագահությունը 1987 թ. մարտի 25-ի նիստում քննարկելով այդ ուսումնասիրության արդյունքները, գոհունակություն է հայտնել «նրա տեսական, գիտական, գաղափարական և ժողովրդատնտեսական մեծ նշանակություն ունեցող բարձր մակարդակի համար»:

Այդ կանխատեսումների հիման վրա նրա գիտական ղեկավարությամբ և անմիջական մասնակցությամբ մշակվել է մինչև 2010 թ. ընկած ժամանակաշրջանում գիտատեխնիկական առաջընթացի կոմպլեքսային ծրագրի «Բնակչության և աշխատանքային ռեսուրսներ» բաժինը: Աշխատանքի ավարտված տարբերակը, որն ընդգրկում է մինչև 2005 թ. ընկած ժամանակաշրջանը, արժանացել է վերադաս պլանային և գիտական կազմակերպությունների բարձր գնահատականին: Այն օգտագործվել է հանրապետության 12-րդ հնգամյա պլանը կազմելիս:

Դեռևս 1960-ական թվականների վերջերին Վ. Խոշաբեկյանն առաջիններից մեկն էր, որ հանդես եկավ անձնական օժանդակ տնտեսության սոցիալ-տնտեսական նշանակության դիտական խորը հիմնավորմամբ:

Առանձնապես ուշադրության է արժանանում և պրակտիկ իրացում գտնում հետծննդյան շրջանում ծննդաբերող կանանց մեկ տարի վնասովի ֆիզիոլոգիական արձակուրդ ընձեռելու հարցադրումն ու գիտական հիմնավորումը, որը նա առաջին անգամ առաջ է քաշել 1973 թ. Կիևում հրավիրված համամիութենական գիտական նստաշրջանում:

Թվում էր, թե նա իր բազմաթիվ հիմնարար հրապարակումներով ամբողջականացրել և ուժերի ներածին չափով ավարտի է հասցրել ժողովրդագրության և հանրապետությունում աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման գիտական պրոբլեմը: Մինչդեռ երկրաշարժը ստիպեց նրան այդ գիտական խնդիրները ներկայացնել

նորովի՝ հիմնավորելով հանրապետությունում լայնամասշտաբ ժողովրդագրական քաղաքականություն կենսագործելու անհրաժեշտությունը: Նա հանդես եկավ նոր խոսքով ու գիտական մտահղացումներով՝ աղետյալ շրջաններում ստեղծված արտակարգ իրավիճակի ժողովրդագրական հետևանքները հաղթահարելու քաղաքականության և սոցիալական բազմաթիվ խնդիրներ լուծելու հիմնարար առաջարկություններով: Եվ պատահական չէր, որ 1988 թ. դեկտեմբերի 16-ին ՀՍՍՀ ԳԱ ընդհանուր ժողովում այդ հարցին նվիրված նրա ելույթում առաջ քաշված գիտական մտահղացումները արժանացան ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն. Ռիժկովի դրվատանքին:

Վ. Խաչաբեկյանն այն գիտնականներից է, ովքեր իրենց ուսումնասիրությունների արդյունքները համարձակորեն հաստատում են գիտական շրջանակներում, վերադաս և պլանային մարմինների կողմից այս կամ այն պրոբլեմը քննարկելիս: Նա բազմիցս հանդես է եկել համամիութենական գիտական կոնֆերանսներում, ՀԿԿ Կենտկոմի գիտագործնական կոնֆերանսներում. ՀՍՍՀ պետպլանում, մասնակցել է երկրում և արտասահմանում հրավիրված միջազգային սիմպոզիումների և կոնգրեսների, զեկուցումներ կարդացել ԳԴՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտում, Բելգիայի համալսարանում, Դրեզդենի աշխատանքի ինստիտուտում և այլուր:

Վ. Խաչաբեկյանը գիտահետազոտական աշխատանքը հաջողությամբ զուգակցում է գիտակազմակերպչական և մանկավարժական գործունեության հետ: Նրա գիտական ղեկավարությամբ մշակվել են բազմաթիվ պրոբլեմներ, լույս տեսել կոլեկտիվ ուսումնասիրություններ, խմբագրվել թեմատիկ ժողովածուներ, պատրաստվել ու պաշտպանվել են դիսերտացիաներ: Վ. Խաչաբեկյանը հանրապետությունում տնտեսական ժողովրդագրության հիմնադիրն է, նա ստեղծել է հանրապետության բնակչության և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության պրոբլեմի ուսումնասիրման գիտական ուղղություն և դպրոց: Նրա գիտակազմակերպչական գործունեությունը հատկապես դրսևորվեց ինստիտուտի դիրեկտորի գիտական գծով տեղակալի պաշտոնում: 1957 թ. սկսած նա համատեղության կարգով քաղաքատնտեսության և աշխատանքային էկոնոմիկայի դասընթացներ է ավանդել Երևանի մի շարք բուհերում:

Վ. Խաչաբեկյանը հասարակական ակտիվ գործիչ է: Ներկայումս նա ՀԿԿ Կենտկոմի «Լենինյան ուղիով» ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ է, ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի հանրապետության «Գիտելիք» ընկերության վարչության նախագահի տեղակալը, ՍՍՀՄ ԳԱ «Ժողովրդագրության և աշխատանքային ռեսուրսների» գիտական խորհրդի անդամ:

Վ. Խաչաբեկյանի աշխատությունները արդիական են, աչքի են ընկնում բարձր գիտականությամբ ու ստեղծագործական բնույթով և իրենց ընդգրկման խորությամբ կոմպլեքսային բնույթի տեսական հիմնարար ուսումնասիրություններ են: Դրանք սովետահայ տնտեսագիտությունը հարստացրել են նոր, առաջնակարգ գիտական նշանակություն ունեցող նվաճումներով և ծանրակշիռ ավանդ են ժողովրդագրության, հանրապետության բնակչության վերարտադրության և աշխատանքային ռեսուրսների կազմավորման ու օգտագործման համալիր հարցերի յուրահատուկ կողմերի գիտական մշակման ասպարեզում:

Վ. Խաչաբեկյանը գտնվում է ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում և լի է բազմաթիվ մտահղացումներով:

Հոբելյարին մաղթենք առողջություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ, ի փառս սովետահայ տնտեսագիտական մտքի հետագա զարգացման:

Լ. Զ. ԱՆԱՆՅԱՆ, Ռ. Մ. ՄԻՐԶՈՅԱՆ
Տնտեսագիտության դոկտորներ»